

համբաւէն ու Չեր փայլուն գործունէութեան լուրէն , վճռեցինք յօժարափոյթ ընդունիլ ու պատուել Չեզ : Որոշեցինք նաև որ ասկէ ետք մեր արքայական գանձէն ընդունիք տարեկան թոշակ մը , որով կարենաք Չեր աստիճանին արժանի դիրք մը գրաւել : »

Կարողոսի կողմէ Լեւոնի արուած դրամական նուէրներու վերաբերեալ հրամանագրերն եւ Լեւոնի կողմէ ստացուած գումարներն յայտնող անդորրագրերը պահուած են Պարիսի Ազգ. Մատենադարանին մէջ : Ոչ միայն հեաքըքրութեան համար՝ այլ եւ իբրև կարևոր վաւերագիր կարժէ որ անոնցմէ մէկ մէկ օրինակ դնեմ այստեղ :

### Հրամանագիր Կարողոսի Զ(1)

Կարողոս , շնորհիւն Աստուծոյ , Թագաւոր Ֆրանսայի . Պատերազմական գործի սահմանուած նպաստներու վրայ մեր սիրելի եւ հաւատարիմ պաշտօնակալ խորհրդականներուն՝ ողջոյն եւ սէր՝ Կը հրամայենք ձեզ , որ յիշեալ նպաստներու ընդհանուր հարկահաւաք Bertaut à la Dent-ի միջոցով մեր յոյժ պատուական եւ յոյժ սիրելի եղբայրակցին՝ Հայոց Թագաւորին՝ տաք եւ յանձնէք հազար Փրանկ(2) , զոր ներկայ հրամանագրովս անոր տուինք եւ կուտանք իբր առանձին շնորհ : Այս հրամանագիրն իրեն վերաբերեալ անդորրագրով միացնէք : Կուզենք , որ յիշեալ գումարն առանց առարկութեան տրուի եւ վճարուի նոյն Bertaut-ի՝ Պարիսի մէջ մեր հաշուասենեկի հաւատարիմ եւ սիրելի անձերու կողմէ , շնայելով ասկէ առաջ մեր յիշեալ եղբայրակցին ըրած մեր ուրիշ պարգևներուն , որոնց մասին ո՛ր եւ է բան յայտնուած ու խօսուած համարելու չէ ներկայ թղթիս մէջ : Եւ կը հրամայենք , կը պատուիրենք ու կարգիւնք որ ոչ ոք հակառակ վարուի ասոր : Տուեալ ի Պարիս , 20-րդ օրն յուլիսի , շնորհաց թուին հազար երեքհարիւր ութսունչորս , եւ մեր Թագաւորութեան չորրորդ տարին :

Թագաւորին կողմէ , վկայութեամբ Բերրիի եւ Բուրգոնիի տիար գրքերուն ,

Ժ. ԴԸ ՄՈՆՏԷԱԿԻՒՅՈՒ

(1) Բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ Document XIV.

(2) Հիմնական դրամով՝ 20,000 ֆր., այն ժամանակուան մեկ ֆրանկն հաւասար ըլլալով հիմնական ֆան ֆրանկին :